

սաների վրա փոքր ինչ բարձրացաւ այս օրերու: Տէրութեան վերջին կարգադրութիւնները նոյն ներգործութիւն ունեցան բոլորաների վրա, ինչպէս մի քանի ժամանակ սրանից առաջ Գիւրիի նշանակ վեր արտաքին գործերի միւնիստր: Ռուսաց 100 ռուբլ. որ նախնիքաց օրը փարիզի բօրսայում արժէր 254 ֆրանկ, անմիջապէս 256 ֆրանկի բարձրացաւ, ուրեմն մի օրվայ մէջ բարձրացաւ 2 ֆրանկով:

Չորեքշաբթի յունիսի 2-ին, Թիֆլիսի Ամարային թատրոնում պ. Կումպանի գրամատիկական խումբը ներկայացրեց Հելիսպիլի «Համբան»: Հերկա յայտումը հետաքրքիր էր այն կողմից, որ Համբանի դերը կատարեց տիկին Վիլիսկայա: Առհասարակ տիկինը լաւ կատարեց իր դերը, թէպէտ նա սոփ չունեցաւ մինչև վերջը տանել: Տեղ տեղ տիկինը շատ գեղեցիկ էր: Կային այնպիսի պատկերներ, որտեղ տիկին Վիլիսկայայի խաղը յիշեցնում էր լինական: Ներկայացման շնորհիւ թատրոնը շատ նըպաստեց տ. Ռուսի-Միխայիլով, որ կատարեց Օֆելիայի դերը: Խելագարութեան տեսարանը տիկին Միխայիլով շատ սիրուն անցկացրեց և ահագին տպաւորութիւն գործեց հասարակութեան վրա: Տիկին Միխայիլով վարձատրեցաւ առատ ծախարարութիւններով: Պ. Կումպանի խումբը բարեգործութեան էլ յետ չէ մնում: Հինգշաբթի յունիսի 3-ին նա մի ներկայացումն տուեց յօգուտ Նիկոլայի բարեգործական ընկերութեան: Ախտոս որ ուսուցիչ խումբը դադարեցնելու է իր ներկայացումները յունիսի 15-ին: Եթէ նա չարունակէր գործը, անկասկած աջողութիւն կունենար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՅՈՒՆ ԲԻՍՄԱՐԿ

Այսօր գերմանական պարլամենտի մէջ պէտք է երկրորդ անգամ կարգադրէր ծրարական մենափառութեան օրինադրէր, գրում է «Голосъ» մայիսի 26-ից: Ոչ ոք չէ կասկածում, որ կառավարչական առաջարկութիւնը այս անգամ աւելի լաւ ընդունելութիւն չի գտնի, քան թէ առաջին անգամ: Այն ժամանակ պարլամենտը անուղղակի կերպով մերժեց օրինադրէր, յանձնելով նրան մի մասնաժողովի քննութեանը, որ թշնամաբար էր վերաբերում օրինադրէր: Այս անգամ նա ուղղակի կը մերժէ այդ առաջարկութիւնը, ինչպէս վարկեցաւ և մասնաժողովը:

Բանի որ կառավարութեան պարտութիւնը պարլամենտի մէջ անկասկածելի է, իշխան Բիսմարկի գլուխ է իր դրութեան անյարմարութիւնը և միջոցներ է փնտռում այսպէս թէ այնպէս պարլամենտական մեծամասնութիւն կազմէ: Այդ հանդամանքը առիթ է տալիս լուրերի տարածմանը, իբր թէ կառավարութիւնը կամենում է իր կողմը դարձնել այս կամ այն կուսակցութիւնը: Բանը այնտեղն է հասել, որ Բեռլինից մեզ հաղորդում են, թէ կառավարութիւնը կամենում է բարեկամանալ սօցիալական կուսակցութեան հետ և, եթէ պարլամենտը արձակվի և նոր ընտրութիւններ նշանակվեն, դադարեցնել սօցիալիստների դէմ հրատարակված օրէնքների դժը:

Եւրօպան սովոր է այն բանին, որ գերմանական կանցլերը անսպասելի գործեր է կատարում: Նա իր ասպարէզը սկսեց, բարեկամ լինելով աւատականների հետ, որոնց նա պատկանում էր թէ ծագումով և թէ իր հակումներով: Երբ նա քաղաքականութեան համար հորակաւ եղաւ հասարակութեան ընդարձակ համակրութիւնը, նա բարեկամացաւ ազատամիտների հետ և նրանց հետ միասին իրագործեց Գերմանիայի միութիւնը: Նրանց հետ նա սկսեց մաքառել կղերականութեան դէմ և նրանց օգնութեամբ անցկացրեց մայիսի երեւելի օրէնքները: Հէնց որ ազատամիտները այլ ևս նրա համար ան-

հրաժեշտ չէին, նա վերադարձաւ պահպանողական և յետադիմական բանակը և համաձայնութիւն կայացրեց նոյն իսկ այն կղերականների հետ, որոնց նա նորերումն զայրացած հարձու էր կենտրոնական կուսակցութեան հետ կայացրած համաձայնութիւնը թանգարժէք և շահաւէտ չէր. և ահա իշխան Բիսմարկ նրանց տեղ ուրիշ դաշնակիցներ է փնտռում:

Զգացմունքների անհաստատութիւնը իշխան Բիսմարկի քաղաքական բնաւորութեան յատկանիշն է: Այդ բանը նկատվում է նրա թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան մէջ: Գերմանական պետական կանցլերի միւնիստրական գործունէութեան առաջին տարիներում մենք տեսանք, որ նա փնտռում էր Նապոլէոն III-ի բարեկամութիւնը և Աւստրիայի հետ միասին պատերազմում էր Դանիայի հետ Գերմանիայի ազդեցւոյն շահերը պաշտպանելու համար: Բայց շուտով Աւստրիան գերմանական միութեան ռիսկիւմ թշնամի յայտնվեցաւ, դուրս ձգվեցաւ Գերմանական Դաշնակցութիւնից և յաղթվեցաւ մի պատերազմով, որ ստատիկ հարուածներ հասցրեց այդ պետութեան հիմունքներին: Ֆրանսիան, որ 1866 թ. միջնորդեց Աւստրիայի և Պրուսիայի հաշտութեանը, չորս տարուց յետոյ ստիպված էր սարսափելի պատերազմ ունենալ Գերմանիայի հետ: Այդ պատերազմը քիչ էր մնում կորուստ պատճառէր մի ծաղկեալ երկրին, որ Գերմանիայի «Ժառանգական թշնամի» անուանվեցաւ: Այժմ, ինչպէս յայտնի է, պետական կանցլերի յարաբերութիւնները սառն են Ռուսաստանի հետ, որից նա այլ ևս չէ սպասում այն ծառայութիւնների, որ արաւ Ռուսաստանը 1870 թուականին: Մի և նոյն ժամանակ Գերմանիայի համար անվտանգ Աւստրիան սրտակից բարեկամ դարձաւ պետական կանցլերի, որ պահպանում է նրա շահերը իբրև իր սեփականները և մի և նոյն ժամանակ ցանկանում է հաշտվել Ֆրանսիայի հետ, թէպէտ բարեկամ է և Ֆրանսիայի դէմ զայրացած Խալիսայի հետ:

Բանի որ իշխան Բիսմարկ մինչև այդ աստիճան փոփոխական է իր յարաբերութիւնները մէջ թէ ներքին կուսակցութիւնների և թէ օտար կառավարութիւնների հետ, պէտք է զարմանալ, որ կղերականների հետ դաշնակցութեան մէջ անաջողութեան հանդիպելով և յոյս չունենալով համաձայնութիւն կայացնել ազատամիտների հետ, իշխան Բիսմարկ աշխատում է հաշտվել իր թշնամի սօցիալիստների հետ: Եթե իշխան Բիսմարկ այնպիսի համարձակ քայլեր է անում, որոնց մասին ուրիշը չի էլ մտածի: Մի և նոյն ժամանակ սօցիալիստները միշտ հալածված չեն եղել իշխան Բիսմարկից: Այժմ, երբ պետական կանցլերը զարմացնում է պարլամենտին նախագիծերով, որոնց ազատամիտ կուսակցութիւնը սօցիալական անմտութիւն է համարում և որոնք համակրութեամբ ընդունվում են սօցիալական հալածուած բանակի մէջ, պետական կանցլերի և սօցիալիստների հաշտութիւնը զարմանալի չէ: Բայց այնու ամենայնև այդպիսի քայլը պետական կանցլերի կողմից չափազանց համարձակ կը լինէր, ուստի մենք չենք կարող ուրիշ կերպ վերաբերվել մեզ հաղորդած լուրին, եթէ ոչ թերահաւատութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Times» լրագրին Կ. Պոլսից գրում են որ սուլթանը, որի աչքի առջև երկու թագաւորներ զահէնից եղան, և որին լաւ յայտնի է, թէ պա-

տահած դէպքում ինչպէս են վարվում Ոսկեղջիւրի վրա գտնված քահնիի հետ, վերջին ժամանակ կրկին սկսեց վազենալ, որ իրան հետ էլ այդպէս կը վարվեն: Այդ պատճառով նա ամեն միջոցներ գործ է դնում այդ ապստամբական ոգին իր սաղմի մէջ ոգնալցնելու համար: Ահա, օրինակ, մէկ դէպք, որը լուսարանում է այդ միջոցները: Թիւրքաց երկու օֆիցիւրներ այս օրերս այցելեցին իւրաքանչիւր տարի նոր բացվող պատկերահանդէսը և այդ պատկերահանդէսի վերակազմուից խնդրեցին իրանց ցոյց տուած երկու պատկերները Բէրլայի ոստիկանութեան գլխավոր Բախի-փաշային ուղարկել, նկատելով, որ նորին գերազանցութիւնը դիպաւորութիւն ունի դիմել այդ պատկերները, բայց նախապէս կամենում է կրկին լաւ տեսնել: Ոչինչ չը կատարեցին, վերակազմու տարած պատկերները Բախի-փաշայի մօտ: Այնտեղ նրան կոպիտ կերպով յայտնեցին, որ պատկերները ապստամբական բնաւորութիւն ունեն և չէ կարելի, որ այդպիսի պատկերներ հրապարակայն հանդէս դրվեն: Պատարարական մէկ տեսարանի մէջ, հասարակական հանդստութեան ներսում և լուսաւորեալ վերակազմու գտաւ մէկ այնպիսի բան, որ կարելի է Հայաստանի փոխարեական պատկերը ընդունել իսկ սոված ցիններով չըջագատված առիւծը նա անխարկութիւն համարեց Թիւրքիայի ալժման քաղաքական դրութեան վրա: Առաջին պատկերը, որ օտոմանեան մէկ հպատակի սեփականութիւնն էր, յարգանքով դրավեցաւ: Նոյնպիսի խառնութիւններ գործ են դնում և մամուլի դէմ: Յունական և հայկական դրքերը, որոնք վաղուց հրատարակված են և այդ դրքերից շատերը գործ են անվում ուսումնարաններում, վերջին ժամանակ խառնակիչ են ճանաչված, նրանց հրատարակիչները սուղանքի կամ բանտարկութեան են դատապարտված: Այդ և դրա նման գործերի համար լրտեսների մէջ առանձին դատակարգ է կազմակերպվել:

— Լիւմբիլից յայտնում են Ջոն Կոմենէյ անունով մէկի բանտարկութեան մասին, որին լօրէկալէն դիւլի սպանողներից մէկն են համարում:

— Ֆրանսիական պատգամաւորների ժողովի նիստի փակումն ի յիշատակ Գարիբալդիի ներկայումս ֆրանսիական մամուլի քննադատութեան առարկայ է դարձել: Ֆրանսիական մամուլի մի մասը համարում է հանդուրժելի յիշատակին նուիրած այդ յարգանքի նշանը, իսկ միւս մասը պախարակում է Գարիբալդի պատգամաւորների ժողովը մտադրութեան ունի Գարիբալդիի թաղմանը պատգամաւորութեան ուղարկելը: Հանդիմանական մամուլը նոյնպէս մտադրութիւն ունի պատգամաւորութեան ուղարկելը: Գամբիետտ և Ֆրէյզինէ հեռագրիները ուղարկեցին Մէնտի Գարիբալդին ցատակցութիւն յայտնելով այդ մեծ կորուստի համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Տօրի վէժմա դա, Վիկտոր Հիւգօի նոր հեղինակութիւնը, ասում է «Русский Вѣдомости» լրագրի, խօսակցութեան առարկայ է Գարիբալդի: Այդ դրաման, անկասկած, մեծ բանաստեղծի հեղինակութիւնների շարքում առաջին անդերից մէկը կը լուին: Ամենից առաջ մի քանի խօսք անենք պիէսայի հերոսի անձնաւորութեան մասին: Թօմաս Տօրի վէժմա—սպանիական առաջին գեներալ-ինկվիզիտորը, որ յայտնի էր իր խառնաբաղութեամբ, որով նա հաղաւոր մարդիկ խաբրիկի վրա այրել տուեց, ծնվեցաւ 1420 թ.ին, մեռաւ 1498 թ.: Նա արքայից հրեաներին Սպանիայից, ստորագրեց 8,800 մահուան պատիժներ, 100,000 մարդիկներին դատապարտեց յախտնական բանտարկութեան, աստիճանակիր աշխատանքների, աքսորի, տանջանքի և այլն: Վիկտոր Հիւգօի դրամայի մէջ փոքրիկ դոն-Սանչօ դէ-Մալինասի սերը դէպք զօնա թօղա Գորաէզ (տղան 17 տարեկան է, իսկ աղջիկը 16 տարեկան), նրանց անմեղ զուարճութիւնները միախառնվում են խաբրիկների վրա այրվող հրեաների սարսափելի աղաղակների հետ: Մէկ տեսարան է ներկայացրած, որ այդ պատանիները կատալոնեան մէկ հին վանքի վայրենի այգու մէջ վաղվում են թիթեաների կակից: Նրանց համբոյրները խաղվում են դազանութեան գոհերի մահուան վերջին ձայնից: Գորաման չորս գործողութիւն ունի, երկար յառաջաբանով: Ֆրէյզինէի թագաւորը, Կաթոլիկեան իդալէլայի ամուսնը, հալածում է դոն Սանչօին, որին կարդինալ վիկոնա Որտեգան ցանկանում է Բուրգոսի դաշն բարձրացնել: Այդ բանը համապատասխանում է Ֆրէյզինէի թագաւորի քաղաքական հայեացքներին և նա արդէն իր համաձայնութիւնը տուեց, որ երկաւասարը Սանչօ Բուր-

գոսեան թագաւոր դառնայ, բայց մի անգամ նա տեսաւ Թօղային և դրաւ վեցաւ նրա զեղեցկութեամբ: Որպէս քաղաքագետ, Ֆրէյզինէի կը հրամայի թագաւոր օծել Սանչօին, որպէս նախանձորդ նա կը հրամայի զաղտնի սպանել նրան: Բայց պատանի-թագաւորը անհարազատ որդի է. նա մարկիզ Ֆուէնտէլ անունով մէկ պապ ունի, որը հօգուտ և մարմնով նուիրված է Ֆրէյզինէի թագաւորին. ցանկանալով Սանչօին փրկել, մարկիզը խորհուրդ է տալիս թագաւորին պապանել նրան, որովհետեւ լաւ դիտէ, որ Ֆրէյզինէի, իր կապակծութեամբ բնաւորութեան պատճառով հակառակը կը գործի: Ֆրէյզինէի իսկ որ այնպէս էր դատում, եթէ Ֆուէնտէլը պանութիւնը ինձ խորհուրդ է տալիս, կը նշանակէ ինքն որ և է շահ ունի այդ բանի մէջ: Հետեւապէս չէ հարկաւոր սպանել: Սանչօ և Թօղա վանքի մէջ կը բանտարկվեն: Երբ մանկահասակ աղջիկը վաճառւում կը լինի, թագաւորը կը փախցնի նրան և կը տանի իր առանձնացած տունը: Թագաւորը այդ գործը յանձնում է Ֆուէնտէլին, և մարկիզը յափշտակում է երկու սիրահարներին ևս և միացնելով նրանց, Ֆրանսիա է ուղարկում, ուր նրանք ազատ կը լինեն: Ազատ են և բաղաւոր են: Այդ վայրկեան, վերջաբանութիւնից առաջ, յայտնվում է Տօրի վէժմադրան, որպէս զ ex machinâ. Մենք տեսանք նրան արդէն յառաջաբանութեան մէջ, որ նա քարոզում էր, թէ մարդկութեան փրկութիւնը խաբրիկով պէտք է լինի, որովհետեւ այդ սարսափելի ֆանտաստիկոսը մարդկութեան փրկութիւնը յախտնական դժուրեց գտնում էր ժամանակաւոր դժուրեցի մէջ: Ուրեղեան եպիսկոպոսը միանգամ դատապարտեց Տօրի վէժմադրան, որպէս վտանգաւոր ֆանտաստիկոսի, գերեզմանի մէջ կենդանի թաղվելուն: Գոն Սանչօ և դոնա Թօղա փորեցին գերեզմանը, աղաթեցին Տօրի վէժմադրան և նրան կենդնորդեցին: Որպէս շնորհակալութիւն Տօրի վէժմադր կրողից իր կողմից ազատել նրանց: Նա իր խօսքի տեղը կը լինի: Նա կը խել նրանց թագաւորի ձեռքերից, որպէս նրանք չորս հանեցին նրան գերեզմանից: Եւ նա այդպէս էլ վարվեց: Նրանք արդէն ազատ են, բայց Սանչօն պատմում է, թէ ինչ միջոցով նա մի կողմը դրեց գերեզմանաբար: Նրան այդ բանի համար լծակի տեղ ծառայում էր խաչը, երկաթէ խաչը: Նա այդ ժանդոտած խաչը գցեց մէկ կիսաւոր պատից: «Ով, երկինք, նրանք դատապարտված են», բացատրեցաւ: Տօրի վէժմադր: Գատապարտված են այդ սիրելի և հրաշալի էակները: Ո՛հ, չէ, էս այլ կերպ կադատեմ նրանց», ասում է ինկվիզիտորը և ուղարկում է նրանց դէպի խաբրիկ: Նրանց հօգուտ փրկութեան համար Գորաման վերջանում է նըրանով, որ երևում է Տօրի վէժմադրի սե զօղակը, որի վրա նկարված են մարդու դանդը և իսպաձե զրկած երկու ոսկրներ: Այդ զրոյալը ծածանվում է արեղաների սե և սպիտակ կապիւլոնների վրա: Այդ դրամատիկական բանաստեղծութեան ամենալաւ գործողութիւնը չորրորդն է: Տօրի վէժմադր տաքորիկ ուղեւորում է Հոնօմ, Ալեքսանդր VI-ը պապին յիշեցնելով իր պարտաւորութիւնը, հանդիպում է այրված սուրբ Ֆրանցիսկ դէ-Պատլին: Ֆանտաստիկոսութեամբ լցված, խաբրիկի առաքելը վիճարանութիւն է սկսում սերտաւոր քրքի հետ, որը ներումն և զեղութիւն է քարոզում: Բոլորին պապը, կանգնելով այդ երկու կնուղիտասների մէջ, ծիծաղում է, ինկազարներ համարելով երկուսին:

ՄՇԱԿԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԵՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 2 յունիսի: Յանկարծակի վախճանեցաւ ծովապետ Բուտալով: «Правда, Вѣстн.» լրագրից հաղորդում է, Վիկենայի ուսուցիչ զեպանի կոմս Ռուրիկ պետական խորհրդի անդամ է նշանակված: Լրագրիները յունիսի 2-ից լուրեր են հաղորդում, ներքին գործերի միւնիստրութեան իրաւասութիւնից դուրս են գալով պոլիցիական և ժանդարմների բաժինները, որոնք առանձին վարչութիւն կը կազմեն Չերեքինի կամ Տրեպովի իշխանութեան տակ: Ներքին գործերի միւնիստրութեան իրաւասութիւնից դուրս կը գան նոյնպէս փօստը, հեռագրիւր և մամուլը:

Կ. ՊՈԼԻՍ, 2 յունիսի: Բ. Գուռը թոյլ տուեց հրեաներին բնակել Միջագետքի, Անենի (?) և Ադանայի վիլայեաներում:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԲՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ Օ Լ Ի Դ Ա

Ներկայ 1882 թ. յունիսի 1-ից փոթոնիս Միտայլովսկայա կըր փողոցի վրա, բուլվարի յանդէպ խումարաձէի տան վերին հարկում ԱԼՅՈՆՍ ԺԱԿՈՒ պրկած հիւրանոցի նախկին պահողը բաց է անում ՀԻՒՐԱՆՈՅ ամեն տեսակ յարմարութիւններով ինչպէս բարձրաստիճան անձանց համար, նոյնպէս և միջին դասերի հասարակութեան համար: Մաքրութեան համար բոլոր միջոցները կը գործադրվեն: Յոյս ունենալ, որ ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ յարգելի հասարակութիւնը ինձ անուշագիր չի թողնի: Անտօն ԱԽՕՐԱՉԷ:

5—6 (1)

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКІХЪ АРМІАНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Գործիչների պրոպագանդիստ վրա, տուն ճարտարապետ Բէյօնի Գրասենեակը բաց է անուշտան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներէրց:

Մամուլի տակից դուրս եկաւ Տիգրան Նազարեանի հրատարակութիւնների VII համարը „ՂԸԼԸՑԷ ԿՆԱՆՈՑ ՊԵՆԸՓԵՇԱԿԸ“ Հեղ. Կոստանտին Մէլք-Նահանգարեանի: Գրքայը Վարաբաղի բարբառով է և այնտեղի կանանց կեանքից մի պատկեր է ներկայացնում:

Գինը 15 Կ. է

Հասցէ՝ Тифлисъ. Ред. „Меру“ Тиграну Назарьянцъ

6—6

1882 յունիսի 6-ին թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճի մէջ լինելու է թիֆլիսի առևտրական հասարակութեան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ Որբերի դատարանի անդամ և նրա կանգնողատի ընտրութեան համար նոյնպէս, և առևտրական հասարակութեանը վերաբերեալ մի քանի գործեր քննելու համար:

Յայտնելով այս թիֆլիսի պ. պ. առևտրականներին և այն անձանց, որոնք իրաւունք ունեն մասնակցել ընտրութիւններին, ԱՌԵՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ինչպէս է նրանց նշանակված ժամանակը շնորհ բերել քաղաքային դումայի դահլիճը, նախագիտւած քննելու որ չեկողները կնիքարկվեն դրամական տուգանքի այն չափով, որ որոշում է պատիժների կանոնադրութեան 1436 յօդուածը:

1—2

Մի երեսուսուրդ որ աւարտել է թիֆլիսի ՈՒՍՈՒՑԱԿԱՆ Ինստիտուտի ուսման ընթացքը, ցանկանում է թիֆլիսի հայոց ուսումնարաններում ՈՒՍՈՒՑՅՈՒՆ պաշտօն ունենալ: Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատան մէջ:

10—10

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԻՆՁԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՁԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 Կ. դիւթիւր, ԾՐԱՐՆԵՐ 3 Կ. հարկւր, սապօն 3 Կ. հատը, արեւի ժԱՄԱՑՈՑՆԵՐ 50 Կ., ՇՂՔԱՆԵՐ (նոր ուկուց) ժամացոյցի համար 50 Կ., կրաններ 10 Կ., ջրի ամաններ 30 Կ., կօթեր 25 Կ., կախարաններ 4 Կ., ՖԻՏՐԱՆԵՐ 3 Կ., ՏԵՃԻՆԵՐ 1 Կ., հայելիներ 35 Կ., վարտիքներ 4 Կ., պիջակներ 6 Կ., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 Կ., գլխարկներ 1 Կ., չը թրջվող վերարկուներ 6 Կ., շէօտկա 90 Կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 Կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 Կ. 50 Կ. դիւթիւր, ՄԵՂԱՄՈՒՍ 32 Կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 Կ. ֆունտը, ԳՐԱՊ, տրիկօ, ԱԼԲՈՒՆԵՐ, բրիտանական մետաղի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էջման:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՑ:

43—50

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Հայոց ծխական ուսումնարաններում:
Մայիսի 18 և 19-ին կաթող. ս. Գէորգ եկեղ. ուսումն.
— — 20-ին Զորաբաշի ս. Գէորգ եկեղ. ուսումն.
— — 22-ին Շամբորեցոց եկեղ. ուսումն.
— — 24-ին ս. Մինաս եկեղ. „Իզմիրեան“ ուսումն.
— — 25 և 26-ին Կուկիա ս. Աստուածածին եկեղ. ուսումն.
— — 27-ին ս. Կարապետ եկեղ. ուսումն.
— — 28 և 31-ին Աւետեաց եկեղ. տղ. և օր. ուսումն.
Յունիսի 1, 2 և 3-ին Հաւլար. Մարիամեան օր. ուսումն.
— — 4 և 5-ին Քանդղեան օր. ուսումն.
Հարցաքննութիւնները կը սկսվեն առաւօտեան 8 ժամին: Թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանց:

ՄԱՆԿԱԲԱՐՉՈՒՆԻ

ՕՐԻՈՐԴ ԽԻՉԵՆԵՆՑ

ՍՈԼՈՒԱԿՈՒՄ, Միրզոֆիւերի տուն, Գաղաքային վարչութեան հանդէպ:

Յանկացողները կարող են դիմել նրան ԱՄԵՆ ՕՐ, ժամը 2-ից, մինչև 5 ժամ երեկոյան:

6—10

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles

6 mois. . . 4 —

S'adresser à F. Salles, avocat

1. Weihburggasse 9. (Vienne)

Sans ajouter le titre du journal.

Միջի փողոց, Կաթօլիչէսկայա փողոցի անկիւն Ձ 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրկնաւորներ 8—30 Կ., չամաղաններ 250—25 Կ., սակիյաթներ 1. 30—12 Կ., սոսու դուշեր և ԴՈՒՄԱՆԱԿԱՐՏԻ 6—35 Կ., մարաններ (погребы) 6—25 Կ., սա մօ վարներ 60 Կ.—1.25 ֆունտը, կուսմանի պղնձե ամաններ, Կերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ու մի վալնի կնէր մրա մօրնի 38 Կ.—75 Կ., հրացաններ երկու լուսնի 6—32 Կ., ռէվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30 Կ., պատրոններ. (գուլաններ) ռէվոլվերի, սիգար Ռէնգարդի ֆարրիկից. պապիրոս և թամբաբու կուշարովի գրկի պապիրոսի. 5,000 ՖՈՒՆՏ ՔԵՑ (չայ) եր. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկուիտ. (սուխար չայու և կաֆէի) Էլնէմի. Կօֆէ Էլնէմի և Միլէշուսի. Պետերբուրգու 40—1 Կ. 25 Կ. հայելիներ ամենայն տեսակ 28 Կ.—240 Կ., պրորկայ գլնէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) դուլթուկ (пучъ), պաղտաններ սամվարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆարրիկաների 1 Կ. 20 Կ.—25 Կ. դուլթիւր. գրչաւորներ 1 Կ. 80 Կ.—5—60 Կ. դանակ ջրի 1—60 Կ.—12 Կ., դանակ հացի 20 Կ.—1 Կ., հատը, կուսմանի 1—40 միւն և 3—20 Կ. պրիբօր. միս կարելու մաշիկայ. Անգլիական ութններ, Բրիտանական չայնիկներ, կաֆէի նիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆլիտեր—Ջուր մաքրելու, կրամալ կարօրկէն 18 Կ., վաքս ֆրանսիայի ծակոյ, թուղթ փոշալի, կանվերտներ, սուրբուշ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակիթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիկներ, գրչային սեղանի և չայու ֆրաժէ, վարչապի և բրիտանական դուլթիւր 1—50 Կ. մինչև 12 Կ., և չայու 45 Կ.—5 Կ., չուլմիչէք 45 Կ.—5 Կ., շամաղաններ ամեն տեսակ 25 Կ.—12 Կ. ջուխտ, պոլսապոչկաններ վարչապի, Ռեթիւի ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, դուլթաններ կանանց և մարդկերանց 15 Կ.—50 Կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, գնանիկներ 35 Կ.—4—50 Կ., հատ, անձրեւի և չորի. սանդղեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, չոտկաներ գլխի, շորի, սապիկի, պոլի և կարտի համար. չուլթի թէլ (бумага) մատովի կօճի և շալէ (гарусъ) ֆէշառկէք մարդկերանց և կանանց, պորամաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գորանտերիկի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 Կ.—30 Կ., կտոր, հոտովա ջրեր, պուրա, Գլիցերին ջրի քացալ, հոտովա պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերադառնալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՐԱՅԷԼ ՏԵՐ ՆԻԿՈԼՈՍՍԵՆԻՑԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կաթօլիչայ փողոցի անկիւնում Ձ 13.

Օտարաբաղմբացի կարող են դիմել հետեւեալ հասցեով. Тифлисъ Муханду Н. Теръ-Никогосову.

64—180

Միջի փողոց, Կաթօլիչէսկայա փողոցի անկիւն Ձ 13.

ԵՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Արժույնը գալիքները № 144 ԽԱՊՈՒՄ Ե արժան գինով վիճակով

Տօնեա ֆարրիկայի ամեն տեսակ ՄԵՐԵԼ, նոյնպէս խապիլայի ՄԱՐՄԱՐԻՆՈՒՍ քանիքը:

ՀԱՅՈՒՆԵՐԸ Ե ՇԵՃԱՆԱԿՆԵՐԸ:

53—60

Ամբողջ աշխարհին յայտնի խոտ հնձերու մեքենայ 14 պուղ ծանրութեամբ Մակ-Կարմիր գործարանից, Չիկագօ հիւսիսային Ամերիկայում, ձիաքարը

ՏՐՄՈՒԹ Զօնավորտի, ՀնճՈՂ Զօնասօն Կոնստիտուտայի 19 պուղ ծանրութեամբ ստացված են նոր բացված երկօղապա փողոց, տուն Ծովեանովի Յատուրովի լամպաների խանութին կից: Մի և նոյն տեղը կան մեծ քանակութեամբ երկաթէ մահճակալներ, ջրահաններ, էմալով ամաններ ամառանոցների համար, չը թրջվող պարուսինա, պատուհանների և դռների գործիքներ, վառերկրագետներ, երկաթէ և պողպատե ապրանքներ:

3—3

Լոյս տեսաւ Տիգրան Նազարեանի հրատարակութիւնների VI գրքայը 2. Գիկկէնսի „Հարս և Սէնտուր“ թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի: Գրքայի վերջը երբեք յաւելուած տպուած են գրականութեան վերաբերեալ յայտարարութիւններ, առաջարկութիւններ և այլն:

Գինը է 15 Կ.

Հասցէ՝ Тифлисъ. Тиграну Назарьянцъ.